ԿՐՕՆԱԳԻՏԱԿԱՆ

«ԱՎԱՆԴՈՒԹՅՈՒՆ» ԵՋՐԸ ԵՒ Հ. ԳԵՈՐԳԻ ՖԼՈՐՈՎՍԿԻՆ (1893-1979)

ա. Կենսագրական ակնարկ[1].

Ռուս մեծանուն հայրաբան, աստվածաբան եւ պատմաբան Հ. Գեորգի Ֆլորովսկին ծնվել է 1893 թ. օգոստոսի 28-ին Օդեսայում: Դեռեւս վաղ պատանեկան հասակից նրա համար աստվածաբանական եւ հոգեւոր կրթությունն ընտանեկան մթնոլորտի էր վերածվել: Հայրը՝ Վասիլի Անտոնովիչ Ֆլորովսկին հոգեւորական էր՝ Աստվածաբանական ակադեմիայի ռեկտոր եւ Ս. Պայծառակերպության Մայր Տաճարի հոգեւոր հովիվ, իսկ մայրը հին հունարենի եւ եբրայեցերենի պրոֆեսորի դուստրն էր: Այսպիսով ապագա աստվածաբանի ուղին կարծես թե կանխագծվում է նրա ընտանեկան հանգամանքներից ելնելով. արդեն 17 տարեկանում նա, իր երկրորդական կրթությունը լիցեյում ավարտելուց հետո, ընդունվում է Օդեսայի համալսարանի փիլիսոփայության ֆակուլտետը: Այստեղ Ֆլորովսկին հիմնավորապես ծանոթանում է ռուս եւ արեւմտաեւրոպական փիլիսոփաների տեսություններին, սովորում մի քանի ժամանակակից եւ հին լեզուներ (հին հունարեն, եբրայեցերեն, լատիներեն, ինչպես նաեւ ֆրանսերեն եւ գերմաներեն): Լեզուների նկատմամբ առանձնահատուկ սերը դրսեւորվում է նաեւ օտարալեզու հեղինակներ ընթերցելու նրա բծախնդրության մեջ: Օրինակ, Վ. Սկոտին ռուսերեն թարգմանությամբ ընթերցելուց հետո նա որոշում է հիմնավորապես սովորել անգլերեն: Փիլիսոփայական ուսումնառության ողջ ընթացքում Ֆլորովսկին անհագորեն ուսանում է փիլիսոփայական մտքի պատմությունը՝ Պլատոնից ու Արիստոտելից մինչեւ Շոպենհաուեր եւ Միլլ: Փիլիսոփայությանը զուգահեռ Ֆլորովսկին ջանադրորեն սկսում է սերտել նաեւ պատմություն: 1916 թ. նրան շնորհվում է առաջին աստիճանի վկայական, որով Ֆլորովսկին իրավունք է ստանում դասավանդելու Ռուսական կայսրության վարժարաններում: Հատկանշական է, որ փիլիսոփայության եւ պատմության ուսումնառության ընթացքին զուգահեռ Ֆլորովսկին, իր իսկ խոսքերով, աստվածաբանությունը սերտում է Եկեղեցում՝ պաշտամունքի ընթացքին եւ հայրաբանական երկերի ընթերցումով: 1919-1920 թթ. Ֆլորովսկին պատրաստվում է ներկայացնելու իր թեկնածուական ատենախոսությունը, երբ վրա հասած հեղափոխությունն ու քաղաքացիական պատերազմն ստիպում են Ֆլորովսկիների ընտանիքին 1920 թ. հունվարին ընդմիշտ լքելու Ռուսական կայսրությունը՝ նախ հաստատվելով Բուլղարիայի մայրաքաղաք Սոֆիայում: Հաջորդ տարի Ֆլորովսկին մեկնում է Պրագա՝ իրավունքի փիլիսոփայություն ուսանելու: Հենց այստեղ 1922 թ. Ֆլո-

1 Գ. Ֆլորովսկու կյանքի մասին ավելի մանրամասն տե՛ս **A. Blane**, A Sketch of the Life of Georges Florovsky, in *Georges Florovsky: Russian Intellectual and Orthodox Churchman*, Crestwood, New-York, 1993:

բովսկին ամուսնանում է Քսենիա Սիմոնովայի հետ, իսկ 1923 թ. պաշտպանում իր ատենախոսությունը հետեւյալ թեմայով՝ «Ալեքսանդր Գերցենի պատմական փիլիսոփայությունը»[2]:

Փարիզի Սուրբ Սերգիոս օրթոդոքս ինստիտուտի հիմնումից քիչ անց՝ 1925 թ., նույն ինստիտուտի տնօրենը՝ Ն. Սերգիոս Բուլգակովը, Ֆլորովսկուն հրավիրում է Փարիզ՝ իբրեւ հայրաբանության դասախոս: Հայրաբանական ուսումնասիրությունների այս ընթացքին է, որ Ֆլորովսկին գրում է իր նշանավոր հայրաբանական ուսումնասիրությունները՝ «Դ դարի եկեղեցական հայրեր», «Ե-Ը դարերի բյուզանդական եկեղեցական հայրեր» եւ «Ռուս Աստվածաբանության ուղիները»: 1932 թվականին ստացած քահանայական ձեռնադրությունն ու օծումն ավելի են հարստացնում նրա աստվածաբանական ներաշխարհը[3]: 1935 թվականից սկսած Ֆլորովսկին Սուրբ Սերգիոս ինստիտուտում ձեռնարկում է մի քանի լուրջ դասախոսություն՝ օրթոդոքս աստվածաբանության հիմնախնդիրների եւ դրանց լուծման ճանապարհների վերաբերյալ: «Ռուս աստվածաբանության հիմնախնդիրները» խորագրով այս դասախոսությունից հետո՝ 1936-ին, Ֆլորովսկին Աթենքում կայացած օրթոդոքս աստվածաբանների առաջին կոնգրեսին ներկայացնում է երկու հավելյալ ուսումնասիրություն՝ «Ռուս աստվածաբանության մեջ ներմուծված արեւմտյան տարրերը» եւ «Հայրաբանական ուսումնասիրություններն ու ժամանակակից աստվածաբանությունը»: Այս դասախոսությունների եւ ուսումնասիրությունների շարքով Ֆլորովսկին իր աստվածաբան եղբայրներին կոչ էր ուղղում՝ ձերբազատվելու օրթոդոքս աստվածաբանության մեջ կաթոլիկ եւ բողոքական աստվածաբանական ամենատարբեր համակարգերից ներթափանցած եւ ձեւավորված pseudomorphosis-ից, այսինքն՝ այն բոլոր ոչ ցանկալի տարրերից, որոնք խորթ են օրթոդոքս աստվածաբանությանն ու ոգեկանությանը: Ֆլորովսկու առաջադրած այս նոր հայրաբանական սինթեզը 1936թ. մեծ ընդունելություն գտավ ուղղափառ եւ հատկապես հույն աստվածաբանների շրջանակներում: Վերադարձը դեպի հայրաբանական ժառանգություն բնավ չի նշանակում լքել արդի հիմնախնդիրների համար մղվող պայքարի դաշտը կամ խուսափել պատմական ճշմարտությունից: Հայրաբանական փորձառությունը պետք է նորովի հայտնաբերվի եւ գործածվի ներկա դարի խնդիրների լուծման համար: Աթենքում կայացած կոնգրեսից քիչ անց Ֆլորովսկին հրատարակում է իր ամենանշանակալի աշխատությունը՝ «Ռուս աստվածաբանության ուղիները» (1937): Ֆլորովսկու այս երկը միանշանակ չընդունվեց ժամանակակիցների կողմից: Այն խստորեն քննադատվեց արտագաղթի ճամփան բռնած ռուս մտավորականության կողմից, որի ամենակարկառուն ներկայացուցչը՝ Նիկոլայ Բերդյաեւը, իր հոդվածով[4] ավելի սրեց Ֆլորովսկու ձեռնադրությունից հետո այս երկու մեծ մտածողների միջեւ առաջացած հակամարտությունը:

Սակայն Ֆլորովսկու կյանքում իրական առաջընթացը կապված էր 1937 թ. կայացած «Հավատ եւ Կարգ» աստվածաբանական հանձնախմբի երկրորդ հանդիպումով, որտեղ Ֆլորովսկին առաջ է քաշում Եկեղեցու «ճշմարիտ կաթողիկե գիտակցության» մասին տեսությունը: Հենց այս տեսլականով էլ ծնվում ու հետագա ամբողջ կյանքում շարունակվում է

2 Տե՛ս **A. Blane**, նշվ. աշխ., էջ 33:

3 Տե՛ս **P. Chamberas**, «Georges Vasilievich Florovsky (1893-1979) : Russian Intellectual Historian and Orthodox Theologian», in *Religious Historians: East and West*, Intercollegiate Studies Institute, 2003, էջ 5:

4 Տե՛ս **Н. Бердяевъ,** Ортодоксия и человечность. Типы религиозной мысли в России, Собрание сочинений, т.III, Париж, 1989, էջ 714:

Ֆլորովսկու էկումենիկ գործունեությունը: Հիմնվելով իր նոր հայրաբանական սինթեզի վրա եւ առաջնորդվելով էկումենիկ շարժման բարձր արժեքներով՝ Ֆլորովսկին իր հրապարակած երկու հոդվածներում[5] եկեղեցաբանական մի նոր տեսություն է մատուցում էկումենիկ լսարանին: Էկումենիկ իր հայացքները Ֆլորովսկին ավելի է զարգացնում 1948 թ. Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի հերթական նիստում՝ «Էկումենիզմի նպատակներն ու կասկածները» խորագրված ատենախոսությամբ:

Ֆլորովսկու համար բախտորոշ է դառնում նաեւ ԱՄՆ-ում ծավալած ուսուցչական գործունեությունը: Սուրբ Վլադիմիր, ինչպես նաեւ Միացյալ Աստվածաբանական Ճեմարաններում, Կոլումբիայի, Բոստոնի, Անդովեր-Նյուտոնի, Հարվարդի, Վաշինգտոնի, Փրինստոնի համալսարաններում դասավանդելու ընթացքին Ֆլորովսկին վերջնականապես զարգացնում ու ավարտուն տեսքի է բերում Եկեղեցու եւ Ավանդության մասին նոր հայրաբանական-աստվածաբանական իր տեսությունը: 1954 թ. օգոստոսի 15-31-ը Իլլինոիսում (ԱՄՆ) ԵՀԽ-ում ներկայացրած «Ավանդություն եւ ավանդություններ» խորագրով զեկույցը դառնում է այս թեմայի մասին Ֆլորովսկու վերջին դիտարկումը: Հ. Գեորգի Ֆլորովսկին մահանում է 1979 թ., իսկ մարմինն ամփոփվում է Սուրբ Վլադիմիր օրթոդոքս ճեմարանի գերեզմանատանը:

բ. «Ավանդություն» եզրը Հ. Գ. Ֆլորովսկու աստվածաբանական համակարգում

Ավանդության մասին Ֆլորովսկու ուսմունքն ամփոփված է նրա երկերի ամբողջական հրատարակության առաջին հատորում՝ «Աստվածաշունչ. Եկեղեցի եւ Ավանդություն. Արեւելյան Օրթոդոքս տեսակետ» խորագրով, եւ «Կենդանի Քրիստոսի մարմինը. Եկեղեցու օրթոդոքս մեկնաբանման փորձ» ֆրանսերենով հրատարակված հոդվածում[6]: Ֆլորովսկու աստվածաբանական համակարգի մեջ «Ավանդության» իմաստի դիտարկման համար հիմնականում օգտվել ենք վերոնշյալ աշխատություններից: Մեր ուսումնասիրության եւ թարգմանության ընթացքին Վաղ եկեղեցում Ավանդության ընկալումը եւ Ֆլորովսկու երկերում օգտագործված հայրաբանական մեջբերումները հստակեցնելու նպատակով իբրեւ գիտական ուղեցույց օգտագործել ենք W. Rordorf-A. Schneider-ի մենագրությունը[7]:

1. Ավանդության տեղը եւ դերը Եկեղեցու խորհուրդի մեջ.

Ֆլորովսկու եկեղեցաբանական համակարգում Ավանդությունը հանդես է գալիս իբրեւ Եկեղեցու խորհրդի էական եւ բաղկացուցիչ մաս[8]: Ֆլորովսկու իսկ բնորոշմամբ Ավանդությունը նույն եկեղեցական գիտակցությունն է, որին հաճախ դիմում են աստվածաբաններն ու հավատացյալները[9]: «Ավանդություն» եւ «Եկեղեցի» բառերը գրեթե միշտ խաչաձեւվում

5 Տե՛ս **G. Florovsky**, «Le Corps du Christ vivant : une interprétation orthodoxe de l'Eglise», in *La Sainte Eglise Universelle-Confrontation Œcuménique*, Neuchâtel/Paris 1948 եւ նույնի, «The Church ; Her Nature and Task» in *Bible, Church, Tradition : An Eastern Orthodox* View, Belmont, Mass., 1972 (այսուհետ՝ ԲՇՏ):

6 Տե՛ս նախորդ ծանոթագրությունը :

7 «L'évolution du concept de tradition dans l'Eglise ancienne», Berne (coll. *Traditio Christiana* V) 1982, 208 էջ:

8 Տե՛ս **M. Marengo**, I confini della Chiesa nel pensiero di Georges Florovsky, Tesi di Dottorato («Եկեղեցու ըմբռնումն ըստ Գ. Ֆլորովսկու, դոկտ. ատենախոսություն»), Firenze 2006, էջ 201-214:

9 Տե՛ս ԲՇՏ, էջ 7:

են Ֆլորովսկու երկերում: Եկեղեցու նշանակությունը սահմանելու համար նա մեջբերում է Օգոստինոսի խոսքերը. «Ես չէի հավատա Ավետարանին, եթե ինձ իր հեղինակությամբ չստիպեր Կաթողիկե եկեղեցին»: Եկեղեցին Քրիստոսի մարմինն է այս երկրի վրա, նրա հարսը, հետևաբար միայն նրան է պատկանում Աստվածային Խոսքը հասկանալու եւ մեկնելու իրավունքը: Սակայն այդ մեկնությունը ո՛չ փիլիսոփայական մեթոդ է, ո՛չ էլ աստվածաբանական համակարգ: Եկեղեցին հավատի բովանդակությունն է, որը հավետ մնալու է խորհուրդ[10]: Ահա թե ինչու մենք միշտ ստիպված ենք կատաֆատիկ աստվածաբանությունը վերահսկել ապոֆատիկով»[11]: Ավելի ընդհանրական եւ ներառական կարգով՝ Ավանդությունը կարող է նույնանալ նաեւ Հայտնության հետ:

2. Հայտնությունը եւ ճշմարտության կանոնը.

Ավանդությունն առկա է Եկեղեցու ծոցում իբրեւ Հայտնության մեկնիչ: Երբ ավետարանիչները գրում էին Տիրոջ մասին իրենց հիշողությունները, նրանք քաջ գիտեին, որ դրանք մեկնվելու են հենց Հայտնության, այսինքն՝ Եկեղեցու Ավանդության մեջ: Եկեղեցական-դավանաբական ճգնաժամերի ժամանակ Եկեղեցու հայրերը միշտ վկայակոչել են Ավանդությունը, եւ ոչ թե ավանդությունները[12]: Սուրբ Բարսեղն ինքը բազմիցս խոսում է բանավոր ավանդությունների մասին, որոնք ներկայացնում են Եկեղեցու հավատն ու խորհրդական (sacramental) կյանքը: Այն, ըստ Ֆլորովսկու, ոչ թե առանձին եկեղեցական անհատների սուբյեկտիվ եւ կամայական ընկալումն է, այլ առաքելական քարոզչության վրա հիմնված Եկեղեցու հավատը[13]: Հայտնությանը վերաբերող բոլոր հարցերը պետք է մեկնվեն այս հավատի միջոցով: Այս միտքն ավելի հստակեցնելու նպատակով Ֆլորովսկին ներմուծում է «ճշմարտության կանոն» հասկացությունը, որն իրականում Սուրբ Իրինեոսի աստվածաբանական տեսության առանձնահատկություններից մեկն է: Վերջինիս համաձայն՝ «ճշմարտության կանոնն» այլ բան չէ, քան առաքելական քարոզչությունն ու հավատը, որն իբրեւ ավանդ տրված է Եկեղեցուն առաքյալների իսկ կողմից: Արդեն նշվեց, որ Ֆլորովսկին փորձում էր Ավանդությունը ներկայացնել իբրեւ Հայտնության առանձնահատկություններից մեկը: Սխալ չի լինի թերեւս նշել, որ իր նոր հայրաբանական սինթեզով Ֆլորովսկին փորձում է ստեղծել եկեղեցաբանական մեկնաբանական մի համակարգ, որը նաեւ Հայտնությունը Հայտնությամբ մեկնելու հնարավորություն է տալիս: Այս տեսությունը Ֆլորովսկին հիմնավորում է Վաղ եկեղեցու կյանքից բերված բազմաթիվ պատմական օրինակներով՝ վերլուծելով մասնավորապես «հավատոյ կանոնը» Սուրբ Աթանասի երկերում, բանավոր Ավանդության ընկալումն ըստ Սուրբ Բարսեղ Կեսարացու, «օրէնք պաշտելոյ» եւ «Կաթողիկե եկեղեցու հեղինակություն» հասկացությունների օգոստինոսյան մեկնաբանությունը: Իր վերլուծությունների ընթացքին, սակայն, Ֆլորովսկին շեշտում է ոչ այնքան Եկեղեցու հայրերի վարդապետական-դավանաբական հմտությունները, որքան Ավանդության եւ Հայտնության հանդեպ նրանց ունեցած բարոյական-հոգեւոր տեսլականը (vision): Եկեղեցական վարդապետությանց նկատմամբ այս բարոյական մոտեցումը Ֆլորովսկին ամենայն հավա-

10 Տես BTC, էջ 4:
11 Տես **G. Florovsky**, «Le Corps du Christ vivant», էջ 48:
12 Տես BTC, էջ 6:
13 Անդ:

նականությամբ ժառանգել էր ռուս մեկ այլ նշանավոր աստվածաբանից՝ Անտոնի մետրոպոլիտ Խրոպովիցկուց[14]:

3. Ընդհանրականության ուժն ու Ավանդությունը.

Եկեղեցու ընդհանրականության գաղափարը սերտորեն կապված է Ավանդության հետ: Ֆլորովսկու դիտարկմամբ՝ ընդհանրականությունը պահպանել են այն մարդիկ, ովքեր ունեին առաքյալների կողմից փոխանցված շնորհաբաշխ Ավանդությունը: Եկեղեցին ընդհանրական է, եթե հավատարիմ է մնացել իր պատմական անցյալին, որն սկսվում է Վերջին ընթրիքով եւ Հոգեգալուստով: Այսպիսով, Ֆլորովսկին Ավանդությունն ընկալում է ոչ միայն տարածական իմաստով՝ այս կամ այն քրիստոնեական համայնքի խորհրդաբանական կյանքում, այլ նաեւ ժամանակային առումով՝ մատնանշելով նրա պատմական ավանդական անցյալը[15]: Այս իմաստով Ֆլորովսկու հաջորդ քայլն Ավանդության պաշտամունքային փոխանցման գործընթացի վերհանումն էր: Այստեղից էլ հենց նրա երկերում սկսեց բավական հաճախակի ի հայտ գալ «օրէնք աղօթելոյ» արտահայտությունը՝ իբրեւ Ավանդության հիմնական կրողներից մեկը: Այլ խոսքով՝ պաշտամունքը կամ ծեսը Ֆլորովսկու բնորոշմամբ ընկալվում է իբրեւ առաքելական քարոզչության հիմնական գործառույթ, որտեղ արտահայտվում է Եկեղեցու կենդանի հավատը, այնինչ դոգման թաքնված է Եկեղեցու խորհրդի գանձարանում, որը Ֆլորովսկին անվանում է «լռումն ճշմարտության»[16]: Ֆլորովսկու առաջ քաշած այս եկեղեցաբանական տեսությունն իր ամբողջության մեջ մեկ միասնական եւ սուրբ եկեղեցու պատմական ուղղակի ընկալումն է: Այն, բացի աստվածաբանական հասկացություն լինելուց, նաեւ պատմական ուղղագիծ շարունակությունն է դեպի Աստծո ըմբռման վախճանաբանական եւ ամբողջական տեսություն[17]:

4. Ավանդության շարունակականությունը.

Ավանդությունը հասակակից է Եկեղեցուն: Նա շարունակելու է իր հավիտենական ճամփորդությունը Եկեղեցու հետ եւ Եկեղեցում. «Ավանդությունը շնորհի վրա հիմնված սկզբունք է, ահա թե ինչու այն պահվում եւ պահպանվում է Եկեղեցու եպիսկոպոսական իշխանությամբ, նրանց կողմից, ովքեր առաքելական հաջորդականությամբ ստացել են ճշմարտության հատուկ շնորհ: Հենց այս պատճառով է Ավանդությունը միության միջոց եւ գործառույթ: Ինչ-որ իմաստով Ավանդությունն անշուշտ Եկեղեցու հիշողությունն է, որը պահպանում է պատմական ու մարդկային հիշողության սրբազան ավանդը»[18]: Ֆլորովսկին, մեջբերելով հայրաբանական տարբեր հայացքներն ու վկայությունները, կառուցում է Ավանդության փոխանցման մի յուրօրինակ տեսություն: Այս փոխանցման ամենաառաջին գործառույթը դոգման է՝ թաքնված Եկեղեցու խորհրդավոր լռության մեջ: Երկրորդ գործառույթը Եկեղեցու քարոզչությունն է՝ kerygma-ն: Չնայած դրանք տարբերվում են իրարից, այնուամենայնիվ, արտահայտում են միեւնույն հավատը տարբեր ձեւերով: Ահա այս եր-

14 Տես **R. Williams**, «Eastern Orthodox Theology» in *The Modern Theologians: An Introduction to Christian Theology in the Twentieth Century (ed. David F. Ford)*, Cambridge, Mass., 1997, էջ 510:

15 Տես **P. Chamberas**, «Some Aspects of the Ecclesiology of Fr. Georges Florovsky», in *Orientalia Christiana Analecta 195*, Rome 1973, էջ 425:

16 Տես **G. Florovsky**, Le Corps du Christ vivant, էջ 41:

17 Տես **P. Chamberas**, նշվ. աշխ., էջ 421:

18 Տես **G. Florovsky**, Le Corps du Christ vivant, էջ 41 :

կու էական գործառույթներն են Ավանդության փոխանցման գլխավոր երաշխիքները: Մյուս կողմից, Ավանդության շարունակականությունը երաշխավորվել է տիեզերական ժողովների եւ Եկեղեցու հայրերի շնորհիվ: Հենց տիեզերական ժողովների շնորհիվ է, որ Եկեղեցական ընդհանրական գիտակցությունը (φρονιμὰ εκκλησιατικον) հասել է մինչեւ մեր օրերը: Եկեղեցին ըմբռնում եւ մեկնում է Աստվածային Խոսքը հենց այս (եկեղեցական) հասկացության շնորհիվ:

Ֆլորովսկու համար Վաղ եկեղեցում կիրարկվող Տիեզերական ժողովների աստվածաբանություն կամ տեսություն գոյություն չունի[19]: Ժողովները Վաղ եկեղեցու կյանքում առկա հիմնախնդիրների լուծման նպատակով էին գումարվում՝ իբրեւ բացառապես շնորհի վրա հիմնված գումարումներ. «Չափազանցություն չի լինի, թերեւս, եթե նշենք, որ Ժողովները երբեք չեն ընկալվել իբրեւ կանոնական հաստատումներ, այլ ավելի շուտ խարիզմատիկ գումարումներ: Դրանց պարբերականության համար երբեք հստակ թվականներ ու ժամանակահատվածներ չեն նշվել»[20]:

Շարունակականության հարատեւության երաշխիքը ճշմարտության չափանիշն է՝ Հիսուս Քրիստոս ինքը: Հետեւաբար, եկեղեցական ժողովը պետք է գումարվի ճշմարտության լույսի ներքո[21]: Այստեղ նկատելի է նաեւ Ֆլորովսկու առաջ քաշած Ավանդության վախճանաբանական ուղղվածությունը: Եթե Ավանդության փոխանցման եւ հարատեւության երաշխիքը Հիսուս Քրիստոս ինքն է, ուրեմն Ավանդությունը հարատեւելու է մինչեւ Հիսուս Քրիստոսի երկրորդ գալուստը: Այլ խոսքով՝ Ավանդությունն սկսել է Քրիստոսով եւ վերջանալու է Քրիստոսով:

Տ. ՇԱՀԵ ԱԲԵՂԱ ԱՆԱՆՅԱՆ

19 Տես BTC, էջ 12:
20 Անդ:
21 Անդ, էջ 14: